03/M17	Կլինիկական կենսաքիմիա	3	16/0/16	III	Քննություն
03/M18	Դեղերի տեխնոլոգիա	3	32/0/0	III	Քննություն
03/M20	Դեղերի իսկության և որակի ուսումնասիրությունը ֆիզ- քիմ եղանակներով	3	8/0/24	III	Քննություն
03/M21	Դեղագիտական քիմիայի փորձնական դասընթաց	2	0/0/32	II	Քննություն

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաժամվալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաժամվալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝

պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝

«Դեղագործական քիմիա»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (գ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
03/M12	Օրգանական քիմիա	3	32/0/0	I	Քննություն
03/M13	Նորմալ ֆիզիոլոգիա	3	32/0/0	I	Քննություն
03/M14	Ֆարմակոգնոզիա	3	32/0/0	II	Քննություն
03/M15	Պաթոֆիզիոլոգիա	3	32/0/0	II	Քննություն
03/M16	Գենետիկայի, միկրոկենսաբանության և վիրուսոլոգիայի մոլեկուլային հիմունքներ	3	32/0/0	III	Քննություն
08/M13	Նուկլեինաթթուների քիմիա	3	32/0/0	III	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժամ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Դեղագործական քիմիա» մասնագիտության ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

03/M01. Լատիներեն 1,2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի նպատակն է՝ ծանոթացնել բժշկական և դեղագիտական տերմինաբանության հիմունքներին: Լատիներեն լեզու առարկան դասվում է այն առարկաների շարքին, որոնց իմացությունը անհրաժեշտ է յուրաքանչյուր դեղագետին, քանի որ այն ապահովում է ընդհանուր լեզվական գիտելիքներ: Տալիս է հիմնարար գիտելիքներ մասնագիտության վերաբերյալ: Հնարավորություն է տալիս կազմել անատոմիական և դեղագիտական տերմիններ և կիրառել դրանք իրենց քերականական կարգերով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիրմանա** լատիներեն լեզվի գոյականի և ածականի առանձնահատկությունները, հինգ հոլովումների նվազագույն բառապաշարը:

2. **կկարողանա** օգտագործել դեղագիտական տերմիններն իրենց քերականական կարգերով, կազմել երկանդամ, եռանդամ, քառանդամ դեղագիտական տերմիններ, որոնք լայնորեն գործածվում են դեղատոմսերում և մեջկառուցել դեղագիտական և կլինիկական տերմիններ, գրել դեղատոմսեր:

3. **կտիրապետի** տեսական և գործնական խորը գիտելիքների մասնագիտության վերաբերյալ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն, լատիներենի այբուբենը, արտասանության կանոններ: **Թեմա 2՝** Հունական տառամիացություններ, հունարեն նախածանցներ, Y-ի ուղղագրությունը, արտասանության կանոններ: **Թեմա 3՝** գոյական անուն, նախնական ծանոթություն լատիներեն լեզվի հինգ հոլովումների հետ, հատկացուցիչ, հատկացյալ: **Թեմա 4՝** Ածական անուն, նախնական ծանոթություն լատիներենի ածականի հետ: Դեղագիտական նվազագույն բառապաշար, ածական-գոյական համաձայնեցում: **Թեմա 5՝** Առաջին հոլովում, առաջին հոլովման գոյականներ, առաջին հոլովման գոյականների վերջավորություններ: Նվազագույն բառապաշար: **Թեմա 6՝** Ձևաբանություն, առաջին հոլովման ածականներ: Գոյական-ածական համաձայնեցում: **Թեմա 7՝** Բայ Բայ, հրամայական եղանակ, նախդիրներ, շաղկապներ: **Թեմա 8՝** Դեղատոմս, դեղատոմսային արտահայտություններ: **Թեմա 9՝** Երկրորդ հոլովում, արական և չեզոք սեռի գոյականներ, նվազագույն բառապաշար, բառակազմություն: **Թեմա 10՝** Դեղամիջոցների անվանակարգություն, դեղամիջոցների անվանակարգության մասին: Դեղամիջոցների անունների հաճախակի գործածվող բառահատվածների ցանկ: Ալկալոիդների և գլիկոզիդների անուններ: Նվազագույն բառապաշար: **Թեմա 11՝** Առաջին և երկրորդ հոլովման ածականներ Առաջին և երկրորդ հոլովման ածականների գործածումը դեղապատրաստուկների և դեղաբույսերի բազմանդամ անուններում: **Թեմա 12՝** Կրավորական սեռ Կրավորական սեռի հարակատար դերբայ: Նվազագույն բառապաշար:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից 2-ն էլ անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

05/M08. Համակարգչագիտություն (3 կրեդիտ)

Շարժական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Առարկայի նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինչպես նաև համակարգչային քիմիայի ոլորտին առնչվող ընդհանուր գործնական գիտելիքներ: Ծանոթացնել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր մասնագիտական ծրագրերի ուսումնասիրություններով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա՝ ինչպիսի մասնագիտական ծրագրային փաթեթներ կան, և դրանց կիրառելիությունը գիտության զանազան բնագավառներում:

2. Կկարողանա

- 2.1 Տիրապետել Windows օպերացիոն համակարգին:
- 2.2 Պատրաստել/մշակել տարբեր բարդության տեքստեր:
- 2.3 Կառուցել բարդ մոլեկուլային համակարգեր:
- 2.4 Կատարել համակարգչային փորձեր:
- 2.5 Հեշտությամբ օգտվել համացանցից:

3. Կտիրապետի

- 3.1 Օպերացիոն համակարգում աշխատանքների կազմակերպման մեխանիզմներին:
- 3.2 Windows օպերացիոն միջավայրում տեքստային ծրագրային փաթեթների հնարավորություններին:
- 3.2 Hyperchem ծրագրային փաթեթի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հաշվողական մեքենաների պատմությունը, տարբեր սերնդի մեքենաներ: Համակարգչի կառուցվածքը, էլքի-մուտքի սարքեր: Օպերացիոն համակարգեր, հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: Հարակից/պերիֆերիկ սարքեր: **Թեմա 2՝** Կիրառական ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: Ցանցեր և Համացանց: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3՝** MS Office ծրագրային փաթեթի տարաբնույթ մոդուլները: MS Office Word տեքստային խմբագրիչ - տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աղյուսակների հետ աշխատանք՝ MS Office Excel մոդուլի օգնությամբ: MS Office Powerpoint մոդուլի առանձնահատկությունները: **Թեմա 4՝**

Մասնագիտական ծրագրային փաթեթներ: Տվյալների բազա: Hyperchem ծրագրային փաթեթ: Ունիվերսալ տվյալների հենքեր, Protein Data Bank: **Թեմա 5**՝ Համակարգչային փորձ՝ Hyperchem ծրագրային փաթեթի օգնությամբ: Քվանտային քիմիա, կիսա-էմպիրիկ (semi-empirical), ոչ էմպիրիկ կամ արմատական մոտեցումներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16/M03. Բնագիտական գիտությունների փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.կծանոթանա դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

2.ձեռք կրերի մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

3.կծանոթանա միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2**՝ Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3**՝ Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4**՝ Ռ. Դեկարտը որպես եվրոպականռացիոնալիզմի հիմնադիր: **Թեմա 5**՝ Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6**՝ Նեոկանտականություն: **Թեմա 7**՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8**՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9**՝ Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10**՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ: **Թեմա 11**՝ XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12**՝ Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13**՝ Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14**՝ Հերմենևտիկական որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15**՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16**՝ Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17**

Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18**՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ ստուգարքով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:

Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “British Studies” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կիմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկություններ Անգլիայի մասին: Անգլիական թագավորության ծագման պատմությունը: **Թեմա 2**՝ Քաղաքական հրապարակախոսության բառապաշարը, վարժություններ քաղաքական տեքստերի հիման վրա: **Թեմա 3**՝ Լոնդոնի հիմնադրման մասին պատմական ակնարկ: **Թեմա 4**՝ “Լոնդոնի տեսարժան վայրերը” տեքստը՝ բաղկացած 4 մասից: **Թեմա 5**՝ Բառակազմական և շարահյուսական վարժություններ քաղաքական հրապարակախոսության հիման վրա: **Թեմա 6**՝ Բրիտանական ավանդույթներն ու սովորությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

03/M02. Մինթետիկ դեղերի քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգով սովորող "Դեղագործական քիմիա" մասնագիտության ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել ժամանակակից բժշկության մեջ կիրառվող այն դեղամիջոցների հետ, որոնք ստացվում են սինթետիկ ճանապարհով: Նպատակն է ծանոթացնել սինթետիկ դեղերի քիմիայի ընդհանուր հիմունքներին, առարկայի խնդիրներին, այդ բնագավառում արդի ձեռքբերումներին, տալ տեղեկություններ ուսումնասիրության մոտեցումների և մեթոդների մասին, ցույց տալ կապը դեղագիտական քիմիայի, դեղաբանության, կենսաքիմիայի, դեղագործության հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանա օրգանական ծագման դեղամիջոցների ստեղծման հիմնական մոտեցումները և սկզբունքները; օրգանական ծագման որոշ առավել կիրառվող դեղամիջոցների դեղաբանական խմբերի սինթետիկ մեթոդները, քիմիական հատկությունները, դեղաբանական ակտիվությունը

2. Կկարողանա գտնել և վերլուծել կապը օրգանական դեղանյութի կառուցվածքի և քիմիական հատկությունների միջև, ինչպես նաև կապը մոլեկուլի կառուցվածքի և դեղաբանական ակտիվության միջև; իրականացնել փորձարարական հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա

3. Կստիքապետի սինթետիկ դեղերի քիմիայի բնագավառում արդի ձեռքբերումներին; օրգանական դեղանյութի ստեղծման ընդհանուր սկզբունքներին, ժամանակակից օրգանական սինթետիկ եղանակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պարզ ալկաններ (պարաֆիններ) և որոշ հալոգեն ածանցյալներ: Ֆիզիկա-քիմիական հատկություններ, դեղաբանական ակտիվություն, կիրառություն: **Թեմա 2՝** Բժշկության մեջ կիրառվող ալիֆատիկ սպիրտներ և ալդեհիդներ: Սինթեզ, քիմիական և ֆիզիկա-քիմիական հատկություններ: Դեղաբանական ազդեցություն, կիրառություն: **Թեմա 3՝** Դիէթիլ եթեր: Սինթեզ, քիմիական և ֆիզիկա-քիմիական հատկություններ: Դեղաբանական հատկություններ, կայունություն, պահպանման պայմաններ, կիրառություն: **Թեմա 4՝** Նիտրոխոլերը և նիտրատները որպես հակաանզինալ դեղամիջոցներ: Նիտրոզլիցերին. ստեղծման պատմությունը: Սինթեզը, քիմիական և այլ հատկությունները: Այլ նիտրատներ: Դեղաբանական ազդեցություն, կիրառություն: **Թեմա 5՝** Դիարիլմեթանային ֆրագմենտ պարունակող հակահիստամինային ակտիվությամբ օժտված դեղամիջոցներ: Սինթեզ, դեղաբանական ակտիվություն, կիրառություն: **Թեմա 6՝** Ֆենոլաթթուների շարքի հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ: Սինթեզ, դեղաբանական ակտիվություն, կիրառություն, կողմնակի բացասական ազդեցություն: **Թեմա 7՝** Արիլալկիլամինների շարքի դեղամիջոցներ: Ադրենալին՝ սինթեզ, քիմիական, դեղաբանական հատկություններ: Ադրենալինի բնական և սինթետիկ անալոգներ. կառուցվածք, դեղաբանական ակտիվություն, կիրառություն: Օպտիկական իզոմերիա: **Թեմա 8՝** Պրոպիոնաթթվի և քացախաթթվի շարքի ոչ ստերոիդային հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ: Սինթեզ, քիմիական, դեղաբանական ակտիվություն: **Թեմա 9. պ-Ամինոբենզոյական թթվի (ՊԱԲ-ի)** ալկիլամինոտետրները որպես տեղային անզգայացնող դեղամիջոցներ (նովոկաին և այլն): Նովոկաինի սինթեզը, կայունությունը, դեղաբանական ակտիվությունը: **Թեմա 10՝** Ամիդների (անիլիդների) խմբի տեղային անզգայացնող միջոցներ (լիդոկային, այլ

ներկայացուցիչներ): Սինթեզ, դեղաբանական ակտիվություն: **Թեմա 11** Արիլալիֆատիկ թթուների և ամինալկանոլների էսթերներ՝ սպազմոլիտին, խոլինոլիտիկ ակտիվությամբ օժտված այլ միացություններ: **Թեմա 12** Սուլֆանիլամիդներ. սինթեզի ընդհանուր սխեման: Ազդեցության մեխանիզմը: Որոշ օրինակներ: **Թեմա 13** Պարա-Ամինոսալիցիլաթթվի (ՊԱՍԹ-ի) հակապալարախտային (հակատուբերկուլյոզային) ակտիվությունը: ՊԱՍԹ-ի, Բեպասկի սինթեզը: **Թեմա 14**՝ 1-Արիլօքսի-3-ամինոպրոպանոլի շարքի միացություններ՝ ադրենապաշարիչ ակտիվությամբ: Ատենոլոլ, պրոպրանոլոլ, մետոպրոլոլ: **Թեմա 15** Պիրազոլոնի շարքի հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ: Սինթեզ, դեղաբանական ակտիվություն, կողմնակի բացասական ազդեցություն: **Թեմա 16** Պիրիդինի շարքի (իզոնիկոտինաթթվի) հակապալարախտային (հակատուբերկուլյոզային) դեղամիջոցներ. իզոնիազիդ, ֆտիվազիդ և այլն: **Թեմա 17** Պիպերիդինի շարքի ցավազրկող միջոցներ՝ պրոմեդոլ, ֆենտանիլ և այլն: **Թեմա 18** Ամինոկետոնների շարքի դեղամիջոցներ. հալոպերիդոլ, մետադոն, սինթեզի ընդհանուր սխեման, դեղաբանական ակտիվություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի բանավոր ներկայացման, իսկ մյուսը՝ գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4;3;3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M 03. Դեղագիտական քիմիայի ընդհանուր հիմունքներ (4 կրեդիտ)

Շարաթական 3 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել դեղամիջոցների ստեղծման ժամանակակից եղանակները, դեղերի դասակարգման սկզբունքները, դեղանյութերի կառուցվածքի բացահայտման ժամանակակից եղանակները, դեղահումքի սինթեզի եղանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** դեղագիտական քիմիայի ժամանակակից խնդիրները, դեղամիջոցների հայտնաբերման հիմնական փուլերը, կծանոթանա կոմբինատորային սինթեզի տեսակներին,

2. **կհասկանա** դեղահումքի ստեղծման եղանակները և դեղերի ստեղծման ու ներդրման ժամանակակից պահանջները,

3. **կկարողանա** դասակարգել դեղերը ըստ քիմիական և դեղաբանական ցուցանիշների:

Բովանդակությունը.

Թեմա 1 Դեղագիտական քիմիայի առարկան և նրա անցած ուղին: **Թեմա 2**՝ Դեղագիտական քիմիայի ժամանակակից խնդիրները: **Թեմա 3** Դեղապատրաստուկների դասակարգման եղանակները: **Թեմա 4**՝

Դեղանյութերի ստեղծման ուղղությունները: **Թեմա 5**՝ Դեղանյութերի ստեղծման համար կիրառվող սինթեզի եղանակները: **Թեմա 6**՝ Օրգանական դեղանյութերի կառուցվածքի բացահայտման ժամանակակից եղանակները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M 04. Օրգանական ծագում ունեցող դեղամիջոցների դեղագիտություն (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դեղագիտական քիմիա-2-ը հանդիսանում է դեղագիտական քիմիա-1 առարկայի օրգանական շարունակությունը և խնդիր ունի կոնկրետ օրինակներով ուսուցանել տարբեր դասի դեղամիջոցների ստացման և ուսումնասիրման եղանակները: Ծրագրի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել օգտագործվող դեղամիջոցների ստացման, ինքնության և մաքրության որոշման եղանակներին: Ծրագրի խնդիրներն են ուսուցանել՝ դեղանյութերի ստացման եղանակները, դեղանյութերի ինքնության որոշման եղանակները, դեղանյութերի մաքրության որոշման եղանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կլմանա** դեղանյութերի ստացման եղանակները, դեղանյութերի ինքնության որոշման եղանակները, դեղանյութերի մաքրության որոշման եղանակները:

2. **կկարողանա** դասակարգել դեղերը՝ ըստ քիմիական և դեղաբանական ցուցանիշների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Օրգանական դեղամիջոցներ, ալիֆատիկ միացություններ: Սպիրտների, ալդեհիդների և ամինասպիրտների ու դրանց էսթերների պատրաստուկները: **Թեմա 2**՝ Ալիֆատիկ միացություններ: Ալիֆատիկ շարքի ամինաթթուների պատրաստուկներ: **Թեմա 3**՝ Արոմատիկ միացություններ: Արոմատիկ շարքի ամինաթթուների ածանցյալների պատրաստուկներ: Օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 4**՝ Արոմատիկ սուլֆոթթուների միացություններ: Սուլֆոթթվի և սուլֆանիլաթթվի ածանցյալների պատրաստուկների ստացման և ինքնության որոշման եղանակները: Այս շարքերի դեղամիջոցների օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 5**՝ Օրգանական դեղամիջոցներ, հետերոցկլիկ միացություններ: Էթիլենիմինի և ֆուրանի ածանցյալների պատրաստուկներ: Օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 6**՝ Հետերոցիկլիկ միացություններ: Պիրազոլի, պիրիդինի և իմիդազոլի ածանցյալների պատրաստուկներ: Օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 7**՝ Մոնո և երկցիկլիկ տերպենների պատրաստուկներ: Ստացման և ինքնու-

թյան որոշման եղանակները: Օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 8`** Որպես դեղամիջոցներ օգտագործվող բնական միացություններ-ալկալոիդներ: Հետերոցիկլիկ և ալիֆատիկ շարքի ալկալոիդների պատրաստուկներ: Օգտագործումը բժշկական պրակտիկայում: **Թեմա 9`** Հակաբիոտիկներ: Ալիցիկլիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ շարքերի հակաբիոտիկներ: Օգտագործումը բժշկական պրակտիկայում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը` բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը` 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է` 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը` համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M 05. Բնական միացությունների քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Կիմանա

1.1 բնական ծագման դեղամիջոցների դասակարգման, ուսումնասիրման սկզբունքները,

1.2 բնական ծագման միացությունների ստացման մեթոդները` (բնական հումքից անջատում, սինթեզի ժամանակակից եղանակներ),

1.3 ուսումնասիրվող բնական միացությունների հիմնական դեղաբանական ազդեցության և բժշկության մեջ կիրառության մասին,

2.Կկարողանա

2.1 վերլուծել կապը բնական ծագման օրգանական միացությունների կառուցվածքի (այդ թվում` օպտիկական իզոմերների) և դեղաբանական ակտիվության միջև;

2.2 իրականացնել փորձարարական հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա:

3. Կտիրապետի

3.1 բնական ծագման օրգանական միացությունների քիմիայի բնագավառում արդի ձեռքբերումներին,

3.2 բնական ծագման օրգանական դեղանյութի ստեղծման ընդհանուր սկզբունքներին, ժամանակակից սինթեզի և անալիզի մեթոդներին:

Բովանդակությունը.

Բաժին առաջին: Ալկալոիդներ: Թեմա 1` Ալկալոիդների ընդհանուր բնութագիրը: Կառուցվածքը, առանձնահատկությունները, բնական հումքից անջատումը, կառուցվածքի հաստատման եղանակները: **Թեմա 2`** Պիրիդինի և պիպերիդինի, պիրրոլի շարքի ալկալոիդներ` նիկոտին, լոբելին և այլն: Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 3`** Խինոլիզինի և խինոլինի խմբի ալկալոիդներ: Խինին, ցիտիզին կառուցվածք, անալոգներ:

Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 4**՝ Իմիդազոլի շարքի ակալոլիդներ: Պիլոկարպին: Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 5**՝ Ինդոլի խմբի ակալոլիդներ: Ռեզերպին, ֆիզոստիգմին: Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 6**՝ Իզոլինոլինի շարքի ակալոլիդներ. ա) *բենզիլիզոլինոլինի շարք*՝ պապավերին, անալոգներ, ֆարմակոլոգիական ազդեցությունը, բ) *ֆենանտրենիզոլինոլինի շարք*՝ մորֆին, անալոգներ, ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 7**՝ Տրոպանի խմբի ակալոլիդներ: Ատրոպին, կոկային: Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը: **Թեմա 8**՝ Պուրինի շարքի ակալոլիդներ՝ կոֆեին, թեոբրոմին, թեոֆիլլին: Ֆարմակոլոգիական ազդեցությունը, կիրառությունը:

Բաժին երկրորդ: Ամինաթթուներ: Թեմա 9՝ Ամինաթթուներ. ընդհանուր տեղեկություններ: Աղբյուրները, դասակարգումը, կառուցվածքը, կենսաբանական դերը: Սպիտակուցային հիմնական ամինաթթուներ: Փոխարինելի և անփոխարինելի ամինաթթուներ: **Թեմա 10**՝ Ամինաթթուների ցվիտտեր-իոնային (բիպոլյար) բնույթը, իզոէլեկտրիկ կետը: Թթվային-հիմնային հատկությունները: Օպտիկական իզոմերիա: **Թեմա 11**՝ Ամինաթթուների սինթեզի եղանակները: **Թեմա 12**՝ Ամինաթթուների քիմիական հատկությունները, որակական ռեակցիաները: Պեպտիդներ, պեպտիդային կապի ստեղծման եղանակները: **Թեմա 13**՝ Ամինաթթուները որպես դեղամիջոցներ: Ամինաթթուների կենսաբանական դերը: Բժշկության մեջ կիրառվող բնական ամինաթթուները և որոշ սինթետիկ ածանցյալները:

Բաժին երրորդ: Հակաբիոտիկներ: Թեմա 14՝ Հակաբիոտիկների ընդհանուր բնութագիրը, ստեղծման պատմությունը: Դասակարգումը: Բակտերիոստատիկ և բակտերիցիդ հակաբիոտիկներ: **Թեմա 15**՝ β -Լակտամային խմբի հակաբիոտիկներ՝ պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ (բնական և կիսասինթետիկ): Կառուցվածքը, կայունությունը, կենսաբանական ակտիվությունը, կիրառությունը: **Թեմա 16**՝ Տետրացիկլինների շարքի հակաբիոտիկներ (բնական և կիսասինթետիկ): Կառուցվածքը, կենսաբանական ակտիվությունը, կիրառությունը: **Թեմա 17**՝ Լևոմիցետին, սինթեզը, օպտիկական ակտիվությունը: Մակրոլիդների խմբի հակաբիոտիկներ: Կառուցվածքը: Կենսաբանական ակտիվությունը, կիրառությունը: **Թեմա 18**՝ Ամինոգլիկոզիդների խմբի հակաբիոտիկներ: Կառուցվածքը, ակտիվությունը, կիրառությունը: Լինկոզամիդներ, կառուցվածքը, ակտիվությունը, կիրառությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M 06. Ընդհանուր դեղաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

Շարաթական 3 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել դեղաբանության հիմնական սկզբունքների, ընդհանուր ռեցեպտուրայի, ֆարմակոկինետիկայի, ֆարմակոդինամիկայի, բժշկության մեջ կիրառվող ժամանակակից դեղանյութերի արսենալի վերաբերյալ, վեգետատիվ և կենտրոնական նյարդային համակարգերի դեղաբանության ուղղությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանան

- 1.1 Դեղաբանությունը գիտություն է դեղանյութերի մասին,
- 1.2 Դեղատոմսի դուրս գրման կանոնները,
- 1.3 Դեղանյութերի ազդեցության ընդհանուր հիմունքները,
- 1.4 Դեղաբանության բաժինները և դեղանյութերը,
- 1.5 Դեղանյութերի ազդեցության մեխանիզմները,

2. Կկարողանան

- 2.1 Մեկնաբանել նոր սինթեզված և փորձարկվող դեղամիջոցների, ազդեցությունը, նրանց նկատմամբ պահանջները,
- 2.2 Իրականացնել պրակտիկ հետազոտություններ ստացված գիտելիքների հիման վրա,
- 2.3 Ուսումնասիրել և հետազոտել տարբեր քիմիական կառուցվածք ունեցող դեղանյութերի կենսաբանական ակտիվությունը,
- 2.4 Բացահայտել դեղանյութերի հիմնական և կողմնակի ազդեցությունը:

3. Կտիրապետեն

- 3.1 Դեղաբանության հիմունքներին,
- 3.2 Դեղանյութերի արսենալին,
- 3.3 Տարբեր խմբերին պատկանող դեղամիջոցների դասակարգմանը,
- 3.4 Տարբեր դեղաձևերի մասին գիտելիքների:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Ներածություն: Ֆարմակոլոգիա առարկան: **Թեմա 2**՝ Ընդհանուր ռեցեպտուրա: **Թեմա 3**՝ Ընդհանուր դեղաբանություն: **Թեմա 4**՝ Անզգայացնող դեղանյութեր (անեսթետիկներ): **Թեմա 5**՝ Վեգետատիվ նյարդային համակարգի դեղաբանություն: **Թեմա 6**՝ Կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող դեղանյութեր: Նարկոզի ժամանակ օգտագործվող դեղանյութեր: **Թեմա 7**՝ Ցավազրկողներ (անալգետիկներ): **Թեմա 8**՝ Հոգեմետ / պսիխոտրոպ/ դեղանյութեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M07. Կենսաքիմիա (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգային գիտելիքներ հաղորդել կենսաքիմիա գիտության ընդհանուր հիմունքների, առարկայի նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների, կենսաքիմիայի բնագավառում ներկա ձեռքբերումների մասին, տալ դրա կապը մի շարք դիսցիպլինների (նյարդաբանության, նյարդաքիմիայի, ֆիզիոլոգիայի, մոլեկուլային կենսաբանության, բժշկության), այդ թվում նաև դեղագործության և դեղաբանության հետ: Դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են կենսաքիմիայի տեսական հիմունքներին, օրգանիզմների կենսագործունեության պրոցեսների հիմքում ընկած ընդհանուր սկզբունքներին, կենսամոլեկուլների փոխանակության ընդհանուր ուղիներին, պատկերացում են կազմում կյանքի մոլեկուլային հիմքի, կենդանի օրգանիզմների գործունեությունը ապահովող կառուցվածքների և մեխանիզմների մասին, հասկանում են կենսաքիմիայի կիրառական դերը դեղագործության ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա, որ կենսաքիմիան գիտություն է կյանքի մոլեկուլային հիմքի մասին, կրմբոնի օրգանիզմների կենսագործունեությունը ապահովող կառուցվածքների և մեխանիզմների առանձնահատկությունները:

2. կհասկանա կենսաքիմիա գիտության կապը, դերն ու ազդեցությունը այլ դիսցիպլինների, այդ թվում նաև դեղագործության և դեղաբանության վրա, նորովի կընկալի կենսաքիմիայի ներկա ձեռքբերումները:

3. կկարողանա մեկնաբանել նոր սինթեզված և փորձարկվող դեղամիջոցների ազդեցությունը այս կամ այն մետաբոլիկ ուղու վրա; իրականացնել պրակտիկ հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա:

Բովանդակությունը.

Բաժին առաջին. կենսամոլեկուլներ *Թեմա 1*՝ Կենսաքիմիա առարկան. Ներածություն: *Թեմա 2*՝ Սպիտակուցներ - Սպիտակուցների կառուցվածքը, դասակարգումը, ֆունկցիան, ֆիզիկաքիմիական հատկությունները, բաժանման և ուսումնասիրման մեթոդները: *Թեմա 3*՝ Ֆերմենտներ՝ կենսաբանական կատալիզատորներ, դրանց դասակարգումը, կառուցվածքը, ֆունկցիան, ֆիզիկաքիմիական և կինետիկական հատկությունները, ակտիվության կարգավորումը, ֆերմենտների դերը դեղաբանության և դեղագործության տեսանկյունից: *Թեմա 4*՝ Վիտամիններ և միկրոէլեմենտներ - նշանակությունը կենդանի օրգանիզմի կենսագործունեության համար, դրանց դասակարգումը, վիտամինների և դրանց ածանցյալների դերը ֆերմենտների գործունեության համար: *Թեմա 5*՝ Ածխաջրեր - էներգիայի և ածխածնի աղբյուր, ածխաջրերի դասակարգումը, նշանակությունն ու ֆունկցիան: *Թեմա 6*՝ Ճարպեր - կառուցվածքային միավոր ճարպաթթուներ, ճարպերի դասակարգումը, դերն ու ֆունկցիան:

Բաժին երկրորդ. նյութափոխանակություն. կատաբոլիզմի հիմնական ուղիները. *Թեմա 7*՝ Նյութափոխանակություն - Ընդհանուր հասկացողություն նյութափոխանակության մասին: Նյութափոխանակության կատարած սպեցիֆիկ ֆունկցիաները: Նյութափոխանակության կարգավորման մակարդակները: *Թեմա 8*՝ Ածխաջրերի կատաբոլիզմը - Գլիկոլիզ: Գլյուկոզի կատաբոլիզմի կենտրոնական ուղին: Բջջային շնչառություն: Լիմոնաթթվի կամ Կրեբսի ցիկլ: Էլեկտրոնների տեղափոխում: Օքսիդատիվ ֆոսֆորիլացում: *Թեմա 9*՝ Կենդանի հյուսվածքներում ճարպաթթուների օքսիդացում - ճարպաթթուների ակտիվացումը և օքսիդացումը

միտոքոնդրիումներում: Հագեցած և չհագեցած ճարպաթթուների օքսիդացման տարբերությունները: **Թեմա 10**՝ Ամինաթթուների օքսիդատիվ ճեղքումը - Ամինաթթուների օքսիդատիվ ճեղքման հնարավոր դեպքերը, ամինատրանսֆերազներ, ամինաթթուների փոխանակության ժառանգական խախտումներ: Ամոնիաթեիկ, ուրիկոթեիկ, ուրեոթեիկ օրգանիզմներ: Օրնի-տինային կամ միզանյութի ցիկլ: **Թեմա 11**՝ Հորմոններ - դերը կենդանի օրգանիզմի համար, դասակարգումը, առանձնահատկությունները ըստ կառուցվածքի և ֆունկցիայի: Էնդոկրինային համակարգի կոորդինացնող կենտրոնը: Օրգան համակարգերի հորմոնները: Հորմոնալ խախտումներ: **Թեմա 12**՝ Նուկլեինաթթուներ - ԴՆԹ և ՌՆԹ, կառուցվածքը: Նուկլեոտիդների նյութափոխանակությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ն նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի բանավոր ներկայացման, իսկ մյուսը՝ գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4;3;3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M08 . Դեղագրքային անալիզ (3 կրեդիտ)

Շարաթական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի նպատակն է ուսումնական գործընթացում ”Դեղագործական քիմիա” մասնագիտության ուսանողին համակարգված գիտելիքներ հաղորդել բժշկության մեջ կիրառվող դեղապրեպարատների որակի վերահսկման ժամանակակից եղանակների մասին: Ամփոփ գիտելիքներ հաղորդել դրանցում խառնուրդների առկայության փորձարկման, հիմնական բաղադրիչների իսկության հաստատման ու քանակական որոշման դեղագրքով երաշխավորված եղանակների և մեթոդների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանա բժշկության մեջ կիրառվող միացությունների, դեղերի, դեղաբանական պրեպարատների ու հումքի որակի վերահսկման, դրանցում խառնուրդների առկայության փորձարկման, հիմնական բաղադրիչների իսկության հաստատման ու քանակական որոշման հնարավորությունների ու եղանակների մասին:

2. Կվարտոլանա առարկայի ծրագրի շրջանակներում դեղանյութերի որակի վերահսկման եղանակների ու հնարավորությունների մասին ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների հիման վրա ինքնուրույն ինֆորմացիա գտնել, համակարգել գիտելիքները, վերլուծել, ինքնուրույն աշխատել անհրաժեշտ մեթոդների և տեխնոլոգիաների գործնական կիրառմամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դեղագիտական քիմիայի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները: Դեղամիջոցների որակը կարգավորող պետական սկզբունքները և դրույթները: Դեղամիջոցների որակի վերահսկողության պետական համակարգը:

Անալիտիկական հետազոտությունների դերը նոր դեղերի ստեղծման գործում: ՉՏՓ-երի մշակման կարգը և բովանդակությունը: **Թեմա 2**՝ Պետական դեղագիրք (Ֆարմակոպեա): Ընդհանուր դեղագրքային հոդված (ԸԴՀ): Դեղագրքային հոդված (ԴՀ): Միջազգային դեղագիրք (ՄԴ): Պետական դեղագրքում օգտագործվող հիմնական հասկացություններ և տերմիններ: **Թեմա 3** Դեղերի որակի վերահսկումը քիմիա-դեղագործական ձեռնարկություններում, վերահսկողանալիտիկ լաբորատորիաներում և դեղատներում: Դեղագործական անալիզի ժամանակակից եղանակները: **Թեմա 4** Դեղագործական անալիզի յուրահատկությունները, հիմնական չափանիշները: Դեղանյութերի ճանաչման ընդհանուր սկզբունքները: Դեղանյութերի իսկության հաստատման ֆիզիկական եղանակները: **Թեմա 5**՝ Անօրգանական դեղանյութերի իսկության հաստատման քիմիական եղանակները: Կատիոնների և անիոնների նստեցման եղանակ: Օքսիդա-վերականգնման ռեակցիաների եղանակ: Չեզոքացման եղանակ: Անիոնների քայքայման և բոցի գունավորման եղանակներ: **Թեմա 6**՝ Դեղանյութերի որակի փորձարկումները: Դեղանյութերի անորակության պատճառները: Դեղանյութերի որակի փորձարկման ընդհանուր պահանջները: Անօրգանական իոնների խառնուրդների առկայության ընդհանուր փորձարկումներ՝ 1. Ցնդող նյութերի և խոնավության որոշումը 2. Միջավայրի pH-ի որոշումը: **Թեմա 7** Դեղաձևերի որակի գնահատման ընդհանուր սկզբունքները: Դեղանյութերի բարորակության հաստատումը ըստ որոշ ֆիզիկական և քիմիական հատկությունների: Յուրատեսակ խառնուրդների հայտնաբերումը: Դեղանյութերի քանակական որոշման հիմնական եղանակները: **Թեմա 8**՝ Դեղանյութերի քանակական որոշման ֆիզիկական և քիմիական եղանակները. 1. Կշռային անլիզ 2. Նստվածքային տիտրում 3. Թթվահիմնային տիտրում 4. Տիտրում ոչ ջրային միջավայրերում 5. Վերօքս տիտրում 6. Կոմլեքսոնոմետրիկ տիտրում: **Թեմա 9**՝ Օրգանական բնույթի դեղամիջոցներ, դրանց անալիզի առանձնահատկությունները, օրգանական պրեպարատների անալիզի եղանակները: Օրգանական միացությունների (ալիֆատիկ և արոմատիկ միացությունների օրինակներով) կառուցվածքի և կենսաբանական ակտիվության փոխադարձ կապը: **Թեմա 10**՝ Էլեմենտօրգանական դեղապրեպարատների իսկության հաստատումը: Օրգանական դեղապրեպարատների իսկության հաստատման եղանակները: **Թեմա 11**՝ Օրգանական նյութերին բնորոշ ընդհանուր քիմիական ռեակցիաներ. 1. Նիտրման և նիտրոզացման ռեակցիաներ: 2. Դիազոտացման և ազոգուզակցման ռեակցիաներ: 3. Հալոգենացման և դեհալոգենացման ռեակցիաներ: 4. Սուլֆուրացման և դեսուլֆուրացման ռեակցիաներ: 5. Կարբոնիլային միացությունների կոնդենսման ռեակցիաներ: 6. Էսթերացման, ացիլման և հիդրոլիզի ռեակցիաներ: 7. Ամինների և ամիդոածանցյալների քայքայման ռեակցիաներ: 8. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ: **Թեմա 12** Օրգանական դեղապրեպարատների քանակական որոշման ընդհանուր եղանակները: 1. Արծաթաչափություն 2. Թթվա-հիմնային տիտրում ջրային և ոչ ջրային լուծույթներում 3. Օքսիդա-վերականգնման եղանակներ 4. Գազաչափական անալիզ 5. Էլեմենտ-օրգանական անալիզ 6. Անալիզի ֆիզ-քիմ եղանակներ և այլն: **Թեմա 13**՝ Առանձին դեղագրքային հոդվածների քննարկումներ՝ նատրիումի քլորիդ, ջրածնի պերօքսիդ, նատրիումի նիտրիտ, յոդ, նատրիումի թիոսուլֆատ, կալիումի պերմանգանատ, էթիլ սպիրտ, ֆորմալդեհիդ, ասպիրին, անալգին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M09. Մասնավոր դեղաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

Շարաքական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Օրագրի նպատակն է՝ Դասընթացի նպատակն է ուսանողությանը ծանոթացնել մասնավոր դեղաբանության հիմունքներին, բաժիններին/ սիրտ-անոթային, կենտրոնական նյարդային համակարգի, շնչառական, մարսողական, արյան մակարդեղիության, իմունային համակարգի, քիմիոթերապևտիկ, հակաբիոտիկների հետազոտության/ հիմնական հասկացություններին, նշել կապը բժշկական այլ դիսցիպլինների, գիտությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանան

- 1.1 Դեղաբանությունը որպես գիտություն դեղանյութերի մասին
- 1.2 Դեղաբանության բաժինները և դեղանյութերը
- 1.3 Դեղանյութերի ազդեցության ընդհանուր հիմունքները
- 1.4 Տարբեր խմբերի պատկանող դեղանյութերի ազդեցության մեխանիզմները, կողմնակի հատկությունները
- 1.5 Մասնավոր դեղաբանության բաժինների դեղանյութերի դեղատոմսերի դուրս գրման առանձնահատկությունները:

2. Կկարողանան

- 2.1 Մեկնաբանել նոր սինթեզված և փորձարկվող դեղամիջոցների ազդեցությունը, նրանց նկատմամբ պահանջները
- 2.2 Իրականացնել պրակտիկ հետազոտություններ ստացված գիտելիքների հիման վրա
- 2.3 Ուսումնասիրել և հետազոտել տարբեր քիմիական կառուցվածք ունեցող դեղանյութերի կենսաբանական ակտիվությունը, բացահայտել դեղանյութերի հիմնական և կողմնակի ազդեցությունը
- 2.4 Կարողալ և դուրս գրել դեղատոմսեր:

3. Կտիրապետեն

- 3.1 Դեղաբանության հիմունքներին
- 3.2 Դեղանյութերի ողջ արսենալին
- 3.3 Տարբեր խմբերին պատկանող դեղամիջոցների դասակարգմանը
- 3.4 Տարբեր դեղաձևերի մասին գիտելիքների
- 3.5 Դեղանյութերի ազդեցության մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միրտ-անոթային համակարգի վրա ազդող դեղանյութեր: Սրտային զլիկոզիդներ: **Թեմա 2**՝ Հակահիպերտենզիվ դեղանյութեր: **Թեմա 3**՝ Հակաառիթմիկներ: **Թեմա 4**՝ Հակա-հեղձուկային դեղանյութեր: **Թեմա 5**՝ Միզամուղներ: **Թեմա 6**՝ Արյան համակարգի վրա ազդող դեղանյութեր: **Թեմա 7**՝ Հակահիստամինային դեղանյութեր: **Թեմա 8**՝ Հակաաթերոսկլերոզային դեղանյութեր: **Թեմա 9**՝ Հակաբակտերիալ դեղանյութեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M10. Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման ֆիզ-քիմ եղանակները (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել ատոմի և մոլեկուլների առաջացման և կառուցվածքի տեսական հիմունքների և մոլեկուլների ուսումնասիրման ֆիզիկական և ֆիզիկաքիմիական մեթոդների մասին: Ծրագիրը յուրացնելով ուսանողը ձեռք կրերի տեսական և գործնական գիտելիքներ Դեղագործական քիմիայի ոլորտի գործունեության ընթացքում մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման մեթոդներից ստացվող արդյունքները վերլուծելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Կծանոթանա մոլեկուլի կառուցվածքի տեսական հիմունքներին:

2.Պատկերացում կունենա նյութագիտության հիմնարար ուղությունների մասին

3. Կծանոթանա մոլեկուլի ուսումնասիրման մեթոդների տեսական հիմունքների, մասնավորապես՝ ճառագայթման երևույթների հետ

4. Կծանոթանա մոլեկուլի ուսումնասիրման ֆիզիկաքիմիական մեթոդների հետ :

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նյութագիտության և նյութի մոլեկուլյար տեսության հիմունքները: Նյութի տեսակները և ազրեգատային վիճակները: Նյութի փոքրագույն մասնիկների գաղափարը: **Թեմա 2**՝ Ֆիզիկական չափվող մեծություններ և չափման համակարգ: Ուղղակի և անուղղակի չափվող ֆիզիկական մեծություններ և նրանց միավորները՝ տարածություն, ժամանակ, ջերաստիճան, արագություն, ուժ, ճնշում, էներգիա:

Թեմա 3՝ Տարրական մասնիկներ և նրանց դասակարգումը: Քվանտային տեսության հիմնական դրույթները: Նյութի ալիքային և մասնիկային բնույթը: Շրեդինգերի հավասարումը, նրա մեկնաբանումը և լուծումները: **Թեմա 4**՝

Էլեկտրամագնիսական ճառագայթման բնութագիրը, դիապագոնները/տիրույթները: Ռադիոալիքներ, օպտիկական ճառագայթում, իոնիզացնող գամմա ճառագայթում: **Թեմա 5**՝ ճառագայթման սպեկտրների առաջացումը: **Թեմա 6**՝ Քիմիական կապ և միջմոլեկուլային փոխազդեցություններ Թեմա 7՝ Պարզ և բարդ մոլեկուլների կառուցվածքը և օպտիկական սպեկտրները /ԻԿ, ՈԻՖ և տեսանելի մարզ/: **Թեմա 7**՝ Էլեկտրոնային սպեկտրոսկոպիա **Թեմա 8**՝ Մոլեկուլի ուսումնասիրման ռեզոնանսային մեթոդները /ՊՄՌ, ՄՄՌ/:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M11 Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով

դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության տեսության, ոլորտին վերաբերվող առանձնահատկությունների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության ոլորտի գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդների գործնական կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Օսնոթացնել կումերցիոն ապրանքագիտության տեսական հիմունքներին:

2.Պատկերացում տալ ապրանքների և ապրանքային շուկայի առանձնահատկությունների մասին:

3.Ներկայացնել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության գործնական խնդիրները և նրանց լուծումները:

4.Օսնոթացնել դեղերի և բուժտեխնիկայի ասորտիմենտի ձևավորման և փոփոխման գործընթացներին :

5.Ներակայացնել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության կիրառական ոլորտը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Դեղագործ պրովիզորին ներկայացվող հիմնական պահանջները, դեղերի հսկման ֆարմացևտիկ անալիզի մեթոդները, ֆարմակոպիկ և այլ պետական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը, ամրագրված տարբեր դեղամիջոցների համար: Դեղերի ժամանակակից և դասական քանակական և

